ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.09.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/62

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ.Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ ոստիկանություն
Բողոք բերող՝ «Ինտելիջենթ Սոլյուշնս» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
Բողոքաբեր՝ «Ինտելիջենթ Սոլյուշնս» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ռ. Դանիելյանթենի, ներկայացուցիչ՝ Յու. Գաբրիելյանի
Երրորդ անձ՝ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Ա. Պարանյանի, Հ. Ենգոյանի
էլեկտրոնային գնումների համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող ընկերության՝ «Այյունեթվորքս» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Տ. Պապիկյանի, Ռ. Գրիգորյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՕՊՊԹ» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, օժանդակ պարագաների /պաշտպանիչ թաղանթ/ ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Ինտելիջենթ Սոլյուշնս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև

Ընկերություն) կողմից 27.08.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑ

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

- Ընդունել և ուսումնասիրել «Ինտելիջենթ Սոլյուշնս» ՍՊԸ-ի ներկայացված առաջարկը:
- Վերանայել ՀՀ ոստիկանության կողմից տրանսպորտային միջոցների հատկացվող հաշվառման վկայագրերի անձնավորոցման համար օժանդակ պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՕՊՊԹ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.08.2019թ.-ի ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշումը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 26.08.2019թ.-ին:

27.08.2019թ.-ին այն վերադարձվել է՝ բողոքում առկա թերությունները վերացնելու համար:

Բողոքը կրկին՝ վերադարձնելուց հետո Բողոքներ քննող անձին է մակագրվել 27.08.2019թ.-ին:

28.08.2019թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 03.09.2019թ.-ին, և 11.09.2019թ-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 11.09.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 24.09.2019թ.-ին:

2. <u>«Ինտելիջենթ Սոլյուշնս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

«Ինտելիջենթ Սոլյուշնս» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Սույն թվականի օգոստոսի 2-ին ՀՀ ոստիկանության կողմից հայտարարվել է ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՕՊՊԹ ծածկագրով ՀՀ ստիկանության կարիքների համար տրանսպորտային միջոցներին հատկացվող հաշվառման վկայագրերի աեձեավորեցման համար օժանդակ

պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված հրատապ բաց մրցույթ: Հայտարարված մրցույթին հայտ է ներկայացրել նաև «Իեփելիջենթ Սոլուշնս» ՍՊԸ-ն 2-րդ չափաբաժնով /CPV կոդ 22981310/508, վարորդական վկայականների և տրանսպորտային միջոցների հաշվառման վկայագրերի տպագրման համար թափանցիկ պաշտպանիչ թաղանթ/: Նշենք, որ Ընկերությունը օգոստոսի 16-ին շարունակ փորձել է մուտքագրել պահանջվող փաստաթղթերը, սակայն ցանցային և համակարգային խնդիրների պատճառով բեռնված ֆայլերը հնարավոր չի եղել մուտքագրել:

Որից հետո քաղաքացի Յուրիդա Գաբրիելյանը, ով իրականացնում էր Ընկերության առցանց էլեկտրոնային գնումներին մասնակցությունը, պատրաստ ունենալով բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը 2019 թվականի օգոստոսի 19-ին շփոթմամբ հայտը ներկայացրել է մեկ այլ պրոֆիլ մուտք գործելով, որից հետո Յուրիդա Գաբրիելյանը ստուգելով ներկայացված հայտը հայտնաբերել է ֆայլի անհասանելիությունը, սակայն բավարար ժամանակ չունենալով հնարավորություն չի եղել սրբագրելու մուտքագրված սխալը, որի արդյունքում խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդված 1-ին մասի 3-րդ կետը:»:

Ելնելով վերոգրյալից Բողոքներ քննող անձին խնդրել են՝

- Ընդունել և ուսումնասիրել «Ինտելիջենթ Սոլյուշնս» ՍՊԸ-ի ներկայացված առաջարկը:
- Վերանայել ՀՀ ոստիկանության կողմից տրանսպորտային միջոցների հատկացվող հաշվառման վկայագրերի անձնավորոցման համար օժանդակ պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՕՊՊԹ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.08.2019թ.-ի ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշումը:

3. <u>ՀՀ ոստիկանության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 28.08.2019թ.-ին գրությամբ դիմել է ՀՀ ոստիկանությանը՝ հնարավորություն տալով «Ինտելիջենթ Սոլյուշնս» ՍՊԸ-ի կողմից 27.08.2019թ.-ի ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Ի պատասխան վերոնշյալ գրության, Պատվիրատուն 02.09.2019թ.-ի թիվ 01.3/11/21180-19 գրությամբ տրամադրել է անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճենները, հայտնելով հետևյալը.

«ՀՀ ոստիկանության կողմից հայտարարված ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՕՊՊԹ ծածկագրով ընթացակարգի բացումը տեղի է ունեցել 19.08.2019թ.-ին, որին հայտ են ներկայացրել երկու մասնակից՝ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ն և «Ինֆորմատիկ Սոլյուշն» ՍՊԸ-ն: «Ինֆորմատիկ Սոլյուշն» ՍՊԸ-ի հայտը չի բացվել համակարգում: Սույն թվականի օգոստոսի 15-ից-19-ը ներառյալ «armeps.am» համակարգում առկա են եղել տեխնիկական խնդիրներ, ինչի հետևանքով անհնարին է եղել նույնիսկ մուտք գործել համակարգ: Եղել են բազմաթիվ զանգեր մասնակիցների կողմից, որոնք հայտնել են, որ ընթացակարգերին չի լինում մասնակցել: Ուսումնասիրելով «Ինտելեջենթ Սոլուշնս» ՍՊԸ-ի բողոքը և հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի դրույթները գտնում ենք, որ պահանջը իրավաչափ է: Ընթացակարգին «Ինտելեջենթ Սոլուշնս» ՍՊԸ-ի կողմից ըստ ներկայացված թղթային տարբերակի առաջարկվել էր ավելի ցածր գնային առաջարկ: Միևնույն ժամանակ համակարգի բնականոն գործելու դեպքում կարող էին լինել նաև այլ մասնակիցներ:»:

4. <u>Երրորդ անձ՝ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

«Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ն 02.09.2019թ.-ին ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««Ինտելիջենթ Սոլուշնս» ՍՊԸ-ն 27.08.2019թ. ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/62 բողոքով հայտնել է, որ սույն թվականի օգոստոսի 2-ին ՀՀ Ոստիկանության կողմից հայտարարվել է ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՕՊՊԹ ծածկագրով ՀՀ Ոստիկանության կարիքների համար տրանսպորտային միջոցներին հատկացվող հաշվառման վկայագրերի անձնավորեցման համար օժանդակ պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված հրատապ բաց մրցույթ: Հայտարարված մրցույթին հայտ է ներկայացրել նաև «Ինտելիջենթ Սոլուշնս» ՍՊԸ-ն 2-րդ չափաբաժնով կոդ 22981310/508, Վարորդական վկայականների և տրանսպորտային միջոցների հաշվառման վկայագրերի տպագրման համար թափանցիկ պաշտպանիչ թաղանթ.: Նշենք, որ Ընկերությունը օգոստոս 16-ին շարունակ փորձել է մուտքագրել պահանջվող փաստաթղթերը, սակայն ցանցային և համակարգային խնդիրների պատճառով բեռնված ֆայլերը հնարավոր չի եղել մուտքագրել:

Որից հետո քաղաքացի Յուրիդա Գաբրիելյանը, ով իրականացնում էր Ընկերության առցանց էլեկտրոնային գնումներին մասնակցությունը, պատրաստ ունենալով բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, 2019 թվականի օգոստոսի 19-ին շփոթմամբ հայտը ներկայացրել է մեկ այլ պրոֆիլ մուտք գործելով, որից հետո Յուրիդա Գաբրիելյանը

ստուգելով ներկայացված հայտը հայտնաբերել է ֆայլի անհասանելիությունը, սակայն բավարար ժամանակ չունենալով, հնարավորության չի եղել ստորագրելու մուտքագրված սխալը, որի արդյունքում խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդված 1-ին մասի 3-րդ կետը:

«Ինտելիջենթ Սոլուշնս» ՍՊԸ-ն բողոքով խնդրել է՝

1. Ընդունել և ուսումնասիրել «Ինտելիջենթ Սոլուշնս» ՍՊԸ-ի ներկայացված առաջարկը:

2. Վերանայել ՀՀ Ոստիկանության կողմից տրանսպորտային միջոցներին հատկացվող հաշվառման վկայագրերի անձնավորեցման համար օժանդակ պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՕՊՊԹ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.08.2019 թ., ժամը 12:00 ի նիստի արձանագրություն 2 ի որոշումը:

Գտնում ենք, որ «Ինտելիջենթ Սոլուշնս» ՍՊԸ-ի կողմից 27.08.2019թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն անհիմն է, դրանում ներկայացված փաստերը հիմնավորված չեն որևէ ապացույցով, որի պայմաններում, գտնում ենք, որ բողոքը ենթակա է մերժման հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «Ինտելիջենթ Սոլուշնս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքով բերված այն հանգամանքը, որ Ընկերության աշխատակից Յուրիդա Գաբրիելյանը բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը 2019 թվականի օգոստոսի 19-ին շփոթմամբ հայտը ներկայացրել է մեկ այլ պրոֆիլ մուտք գործելով, որից հետո ստուգելով ներկայացված հայտը հայտնաբերել է ֆայլի անհասանելիությունը՝ արդյունքում բավարար ժամանակ չունենալով՝ հնարավորության չի ունեցել ստորագրելու մուտքագրված սխալը՝ գտնում ենք, որ վերը նշված հանգամանքը չի հանդիսանում բավարար հիմք 19.08.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացրած որոշումները վերանայելու համար, քանի որ գործ ունենք «Ինտելիջենթ Սոլուշնս» ՍՊԸ-ի աշխատակցի թերացման հետ, որը որևէ կապ չունի թե armeps.am համակարգի և թե Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որևէ ոչ իրավաչափ գործողության հետ:

Ավելին, բողոքաբերի կողմից չի ձեռնարկվել որևէ այլ գործողություն ի հայտ եկած խնդիրները լուծելու համար, որը թույլ է տալիս ենթադրելու, որ «Ինտելիջենթ Սոլուշնս» ՍՊԸ-ի աշխատակցի թերացման պատճառով՝ Ընկերությունը չկարողանալով հայտ ներկայացնել և/կամ բեռնել հայտը ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՕՊՊԹ ծածկագրով ընթացակարգին՝ այս կերպ փորձ է կատարում չհիմնավորված բողոք ներկայացնելով՝ անխուսափելիորեն

հանգեցնել այլ մասնակիցների, այդ թվում նաև «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի իրավունքների և օրինական շահերի խախտմանը:

Հարգելի պարոն Օհանյան, միևնույն ժամանակ հաշվի առնելով այն հանգամանքը, որ 27.08.2019թ. ներկայացված բողոքի արդյունքում անհասկանալի կերպով ՀՀ Ոստիկանության կողմից կասեցվել է ամբողջ Ընթացակարգը, մինչդեռ բողոքաբերի կողմից վիճարկվում է միայն Ընթացակարգի 2 չափաբաժինը՝ ինչը տեսանելի է ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/62 բողոքով, ուստի ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք՝ կամ կայացնել որոշում ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՕՊՊԹ ծածկագրով հրատապ բաց մրցույթի միայն 1-ին չափաբաժնի մասով մրցույթը շարունակելու, կամ տալ համապատասխան հանձնարարական/պարզաբանում ՀՀ Ոստիկանությանը առ այն, որ բողոքի արդյունքում կասեցված է միայն 1-ին չափաբաժինը:

Ելնելով վերը նշված փաստերից և փաստական հանգամանքներից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին խնդրում ենք «Ինտելիջենթ Սոլուշնս» ՍՊԸ-ի կողմից 27.08.2019թ. ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/62 բողոքը մերժել:»:

Ի լրումն ներկայացված դիրքորոշման, «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ն 16.09.2019թ.-ին ներկայացված գրությամբ հայտնել է, որ. *«Ծանոթանալով թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/62 ծածկագրով բողոքի վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված եզրակացությունը, որով մասնավորապես նշվել է՝*

«Ի լրումն 10/09/2019թ. թիվ Ն/26-1/29133-2019 գրության՝ հայտնում ենք, որ «Ինտելիջենթ Սոլուշնս» ՍՊԸ-ի բարձրացրած խնդրի կապակցությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը դիմել է համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությանը:

Վերջինս տեղեկացրել է, որ armeps համակարգը 16/08/2019թ. աշխատանքային օրվա առաջին կեսին ունեցել է մասնակի խափանում, իսկ 15/08/2019թ. մինչև 19/08/2019թ. ընկած ժամանակահատվածի մնացած օրերին համակարգն աշխատել է անխափան:

Հայտնում ենք նաև, որ էլեկտրոնային գնումների համակարգում առկա տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՕՊՊԹ ծածկագրով ընթացակարգի շրջանակում «Ինտելիջենթ Սոլուշնս» ՍՊԸ-ի կողմից 07/08/2019թ. ժամը 13:49-ին ցուցաբերվել է հետաքրքրվածություն, 07/08/2019թ. ժամը 13:50-ին և 09/08/2019թ. ժամը 10:06-ին իրականացվել է հրավերի փաստաթղթերի բեռնում:

Ինչ վերաբերում է գրությամբ նշված ժամանակահատվածում համակարգի խափանումներով աշխատելուն, ապա հայտնում ենք, որ armeps համակարգը աշխատել է անխափան, որի միջոցով գրությամբ նշված ընթացակարգի հայտարարության և հրավերի

հրապարակման օրվանից՝ 02/08/2019թ. մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրը՝ 19/08/2019թ. համակարգում իրականացվել է թվով 1176 հայտի փաթեթի ներբեռնում՝ թվով 352 ընթացակարգերի համար, մասնավորապես՝ 16/08/2019թ. իրականացվել է թվով 50 հայտի բեռնում, իսկ գրությամբ նշված ընթացակարգի համար ներբեռնվել է 2 հայտ՝ 06/08/2019թ. ժամը 10:59-ին և 19/08/2019թ. ժամը 10:23-ին, որոնք հասանելի են Ջրրոճթտ.Ջրո կայքի «Հայտեր» բաժնում:

Հիմք ընդունելով վերը նշված եզրակացությունը և հաշվի առնելով «Ինտելիջենթ Սոլուշնս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի հիմնավորումները, կարելի է արձանագրել հետևյալը.

1. Ըստ ՀՀ ՖՆ տրամադրված տեղեկատվության՝ վիճարկվող ընթացակարգի հայտարարության և հրավերի հրապարակման օրվանից՝ 02/08/2019թ. մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրը՝ 19/08/2019թ., այդ թվում նաև Բողոքաբերի կողմից նշված 15/08/2019թ. մինչև 19/08/2019թ. ընկած ժամանակահատվածի օրերին armeps համակարգն աշխատել է անխափան, ուստի «Ինտելիջենթ Սոլուշնս» ՍՊԸ-ն ուներ բոլոր հնարավոր միջոցները իրացնելու իր մասնակցության իրավունքը և ներբեռնել «ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՕՊՊԹ» ծածկագրով ընթացակարգի մասնակցության հայտը:

2. Ներկայացված բողոքով «Ինտելիջենթ Սոլուշնս» ՍՊԸ-ն հայտնել է, որ իր մասնակցության իրավունքը, այնուամենայնիվ, իրականացրել է 19.08.2019թ.՝ ներբեռնելով հայտ, սակայն սխալմամբ մուտ է գործել այլ ընկերությանը պատկանող այլ պրոֆիլով: Եվ երբ սխալը հայտնաբերել է, փորձել է ուղղել ներկայացված հայտը, սակայն ժամանակի սղության պատճառով դա հնարավոր չի եղել անել: Այս փաստերը վկայում են, որ «Ինտելիջենթ Սոլուշնս» ՍՊԸ-ն իրացրել է իր մասնակցության իրավունքը և կարողացել է ներբեռնել հայտը: Իսկ թե սխալ պրոֆիլի օգտագործման փաստը հայտնաբերելիս, երբ է փորձել մուտք գործել համակարգ և ուղել թույլ տված սխալը, Բողոքաբերը որևիցե տեղեկատվություն չի ներկայացրել: Այստեղ պետք է նկատի ունենալ, որ ՀՀ ՖՆ հավաստել է, որ նաև այդ ժամանահատվածում armeps համակարգն աշխատել է անխափան, ուստի «Ինտելիջենթ Սոլուշնս» ՍՊԸ-ն կարող էր իր ներբեռնած հայտը մինչև հայտերի բացման ժամկետը ուղղել: Միևնույն ժամանակ չի բացառվում, որ ներբեռնված հայտը հնարավոր է, որ ստուգվել է «Ինտելիջենթ Սոլուշնս» ՍՊԸ-ի կողմից արդեն իսկ հայտերը բացվելուց հետո: Այս դեպքում էլ մենք գործ ունենք «Ինտելիջենթ Սոլուշնս» ՍՊԸ-ի կողմից բացառապես ոչ մի ապացույցով չհիմնավորված հայտարա-րությունների հետ:

3. Եվ վերջապես, «Ինտելիջենթ Սոլուշնս» ՍՊԸ-ն տվյալ ընթացակարգին ՍԽԱԼՄԱՄԲ մասնակցել է այն ընկերության պրոֆիլով, որը ներառված է եղել գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, և հենց վերոհիշյալ հիմքով է տվյալ մասնակցության հայտը մերժվել:

Վերոհիշյալը վկայում է այն մասին, որ «Ինտելիջենթ Սոլուշնս» ՍՊԸ-ն օժտված է եղել բոլոր հնարավորություններով իրացնելու տվյալ ընթացակարգին իր մասնակցության իրավունքը, այդ իրավունքը իրացրել է, սակայն մուտք է գործել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված ընկերության պրոֆիլով, ինչն էլ հիմք է հանդիսացել վերջինիս հայտը մերժելու համար:

Ինչ վերաբերում է armeps.am համակարգի աշխատանքների խափանման վերաբերյալ Բողոքաբերի հայտարարություններին, ապա դրանք հիմնավորված չեն որևիցե ապացույցով մինչդեռ ՀՀ ՖՆ հավաստել է, որ նաև այդ ժամանահատվածում armeps համակարգն աշխատել է անխափան, ուստի նաև այս տեսանկյունից «Ինտելիջենթ Սոլուշնս» ՍՊԸ-ն օժտված է եղել բոլոր հնարավորություններով իրացնելու տվայլ ընթացակարգին իր մասնակցության իրավունքը:

Վերոշարադրվածը թույլ է տալիս «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ին եզրակացնելու, որ «Ինտելիջենթ Սոլուշնս» ՍՊԸ-ի աշխատակիցները փաստորեն հայտը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետի օրը չներկայացնելով և միայն վերջին օրը հայտի փաթեթը ներբեռնելիս՝ սխալներ թույլ տալով և իրենց մեղքով մասնակցության իրավունքի արդյունավետ իրացումից զրկվելով, այժմ նման անհիմն բողոք ներկայացնելով՝ փորձում են ետ բերել բողոքարկվող ընթացակարգը:

Վերոհիշյալը իր հերթին վտանգում է այն մասնակիցների իրավունքները, որոնք պատշաճ և ժամանակին իրականացրել են իրենց մասնակցության իրավունքը:

Գտնում ենք, որ նման անհիմք բողոք բավարերելը պարարտ հող կստեղծի անպատշաճ մասնակիցների համար ընթացակարգերը անօրինական հիմքերով հետ վերադարձնելու գործում:»:

5. <u>ԳԲՔԱ-LO-2019/62 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ ոստիկանության կարիքների համար «օժանդակ պարագաների /պաշտպանիչ թաղանթ/» ձեռքբերման նպատակով 02.08.2019թ.-ին հայտարարավել է «ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՕՊՊԹ» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ նաև Հանձնաժողով) 19.08.2019թ.-ին կայացած նիստի N 2 արձանագրության համաձայն՝ հայտերի բացումը տեղի է ունեցել 19.08.2019թ.-ին: Էլեկտրոնային եղանակով կազմակերպված ընթացակարգին հայտ է ներկայացրել «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ն /համատեղ գործունեության պայմանագիր Atlas international AG-ի հետ/ և «Ինֆորմատիկ Սոլյուշն» ՍՊԸ:

Նույն անձանագրության համաձայն՝ «Ինֆորմատիկ Սոլյուշն» ՍՊԸ-ի հայտը ներժվել է, քանի որ կազմակերպությունը ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձն 04.09.2019թ.-ին թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/2/28625 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը (այսուհետ նաև՝ Նախարարություն) խնդրելով պարզաբանել, արդյոք www.armeps.am համակարգում (15.08.2019թ.-ից մինչև 19.08.2019թ.-ի ժամը 12:00-ը ընկած ժամանակահատվածը) առկա են եղել ցանցային և համակարգային խնդիրներ, թե ոչ: Ինչպես նաև Ընկերության կողմից հայտը չներկայացնելու անհնարինության պատճառների մասին տեղեկատվություն:

Ի պատասխան վերոնշյալ գրության ՀՀ ֆինանսների նախարարությունը 10.09.2019թ.-ին թիվ Ն/26-1/29133-2019 գրությամբ հայտնել է, որ «Ինֆորմատիկ Սոլուշն» ՍՊԸ-ի բարձրացրած խնդրի կապակցությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը դիմել է համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությանը:

Վերջինս տեղեկացրել է, որ armeps համակարգը 16.08.2019թ.-ին աշխատանքային օրվա առաջին կեսին ունեցել է մասնակի խափանում, իսկ 15.08.2019թ.-ից մինչև 19.08.2019թ.-ը ընկած ժամանակահատվածի մնացած օրերին համակարգն աշխատել է անխափան և գրության մեջ նշված ծածկագրով ընթացակարգին ներկայացված հայտի փաթեթը բեռնվել է համակարգ, առկա է համակարգում և տեսանելի armeps.am կայքի «Հայտեր» բաժնում, սակայն այն թերի է, պայմանավորված հայտի փաթեթի պատրաստման՝ ֆայլերի կցագրման, փաթեթավորման և/կամ ներբեռնման շրջանակում գործողությունները մասնակցի կողմից սահմանված պահանջներին անհամապատասխան կատարված լինելու հանգամանքով:

ՀՀ ֆինանսների նախարարությունը նաև տեղեկացրել է, որ էլեկտրոնային գնումների համակարգում առկա տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՕՊՊԹ ծածկագրով ընթացակարգի շրջանակում «Ինֆորմատիկ Սոլուշն» ՍՊԸ-ի կողմից 07.08.2019թ.-ին ժամը 13:47-ին ցուցաբերվել է հետաքրքրվածություն, 08.08.2019թ.-ին ժամը 16:26-ին իրականացվել է հրավերի փաստաթղթերի բեռնում, իսկ 19.08.2019թ.-ին ժամը 10:23-ին՝ հայտի փաթեթի ներբեռնում, ինչի կապակցությամբ

համակարգի կողմից ուղարկվել է ավտոմատ ծանուցում՝ ներբեռնված հայտի փաթեթի ստացականի համարով:

Նույն գրությամբ Նախարարությունը նաև նշել է, որ ինչ վերաբերում է գրությամբ նշված ժամանակահատվածում համակարգի խափանումներով աշխատելուն, ապա հայտնում ենք, որ armeps համակարգը աշխատել է անխափան, որի միջոցով գրությամբ նշված ընթացակարգի հայտարարության և հրավերի հրապարակման օրվանից՝ 02.08.2019թ.-ին մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրը՝ 19.08.2019թ.-ը համակարգում իրականացվել է թվով 1176 հայտի փաթեթի ներբեռնում՝ թվով 352 ընթացակարգերի համար, մասնավորապես՝ 16.08.2019թ.-ին իրականացվել է թվով 50 հայտի բեռնում, իսկ գրությամբ նշված ընթացակարգի համար ներբեռնվել է 2 հայտ, որոնք հասանելի են armeps.am կայքի «Հայտեր» բաժնում:

Ի լրումն 10.09.2019թ.-ի թիվ Ն/26-1/29133-2019 գրության, Նախարարությունը 11.09.2019թ.-ին թիվ Ն/26-1/29340-2019 գրությամբ հայտնել է, որ «Ինտելիջենթ Սոլուշնս» ՍՊԸ-ի բարձրացրած խնդրի կապակցությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը դիմել է համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությանը:

Վերջինս տեղեկացրել է, որ armeps համակարգը 16.08.2019թ.-ին աշխատանքային օրվա առաջին կեսին ունեցել է մասնակի խափանում, իսկ 15.08.2019թ.-ից մինչև 19.08.2019թ.-ը ընկած ժամանակահատվածի մնացած օրերին համակարգն աշխատել է անխափան:

Նախարարությունը նաև տեղեկացրել է, որ էլեկտրոնային գնումների համակարգում առկա տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՕՊՊԹ ծածկագրով ընթացակարգի շրջանակում «Ինտելիջենթ Սոլուշնս» ՍՊԸ-ի կողմից 07.08.2019թ.-ին ժամը 13:49-ին ցուցաբերվել է հետաքրքրվածություն, 07.08.2019թ.-ին ժամը 13:50-ին և 09.08.2019թ.-ին ժամը 10:06-ին իրականացվել է հրավերի փաստաթղթերի բեռնում:

Նույն գրությամբ Նախարարությունը նաև նշել է, որ ինչ վերաբերում է գրությամբ նշված ժամանակահատվածում համակարգի խափանումներով աշխատելուն, ապա հայտնում ենք, որ armeps համակարգը աշխատել է անխափան, որի միջոցով գրությամբ նշված ընթացակարգի հայտարարության և հրավերի հրապարակման օրվանից՝ 02.08.2019թ.-ից մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրը՝ 19.08.2019թ.-ը համակարգում իրականացվել է թվով 1176 հայտի փաթեթի ներբեռնում՝ թվով 352 ընթացակարգերի համար, մասնավորապես՝ 16.08.2019թ.-ին իրականացվել է թվով 50 հայտի բեռնում, իսկ գրությամբ նշված ընթացակարգի համար ներբեռնվել է 2

հայտ՝ 06.08.2019թ.-ին ժամը 10:59-ին և 19.08.2019թ.-ին ժամը 10:23-ին, որոնք հասանելի են armeps.am կայքի «Հայտեր» բաժնում:

«Այյունեթվորքս» ՍՊԸ-ի ներկայացուցիչները մասնակցելով 11.09.2019թ.-ին տեղի ունեցած նիստին, բանավոր կերպով հայտնել են, որ 15.08.2019թ.-ին և 19.08.2019թ.-ին ներկայացվել են բազմաթիվ հայտեր: Ներկայացուցիչները նշել են, որ եթե համակարգը ընդհանրապես չաշխատեր, ապա ընդհանրապես հնարավոր չէր լինի ներկայացնել հայտեր: Եթե համակարգի խափանում է լինում, ապա դա գրանցվում է Նախարարությունում, իսկ եթե համակարգում գործիքը խափանված լինի, ապա բոլորի մոտ համակարգը չի աշխատի, այլ ոչ թե անհատական: Նշված դեպքում մասնակցի ոչ թե ֆայլն է վնասված, այլ ընդհանրապես այն բացակայել է, չի ներբեռնվել համակարգ:

6. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Ինտելիջենթ Սոլյուշնս» ՍՊԸ-ի կողմից 27.08.2019թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է, ենթակա է մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված

անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

ՀՀ ոստիկանության կողմից «օժանդակ պարագաների /պաշտպանիչ թաղանթ/» ձեռքբերման նպատակով 02.08.2019թ.-ին հայտարարված «ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՕՊՊԹ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.08.2019թ.-ին կայացած նիստի N 2 արձանագրության համաձայն՝ հայտերի բացումը տեղի է ունեցել 19.08.2019թ.-ին, որին հայտ է ներկայացրել «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ն /համատեղ գործունեության պայմանագիր Atlas international AG-ի հետ/ և «Ինֆորմատիկ Սոլյուշն» ՍՊԸ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 11.09.2019թ.-ին թիվ Ն/26-1/29340-2019 գրությամբ հայտնել է, որ «Ինտելիջենթ Սոլուշնս» ՍՊԸ-ի որ armeps համակարգը 16.08.2019թ.-ին աշխատանքային օրվա առաջին կեսին ունեցել է մասնակի խափանում, իսկ 15.08.2019թ.-ից մինչև 19.08.2019թ.-ը ընկած ժամանակահատվածի մնացած օրերին համակարգն աշխատել է անխափան:

Նախարարությունը նաև տեղեկացրել է, որ էլեկտրոնային գնումների համակարգում առկա տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՕՊՊԹ ծածկագրով ընթացակարգի շրջանակում «Ինտելիջենթ Սոլուշնս» ՍՊԸ-ի կողմից 07.08.2019թ.-ին ժամը 13:49-ին ցուցաբերվել է հետաքրքրվածություն, 07.08.2019թ.-ին ժամը 13:50-ին և 09.08.2019թ.-ին ժամը 10:06-ին իրականացվել է հրավերի փաստաթղթերի բեռնում:

Նույն գրությամբ Նախարարությունը նաև նշել է, որ 15.08.2019թ.-ից մինչև 19.08.2019թ.-ի ժամը 12:00-ը ընկած ծամանակահատվածում armeps համակարգը աշխատել է անխափան, որի միջոցով գրությամբ նշված ընթացակարգի հայտարարության և հրավերի հրապարակման օրվանից՝ 02.08.2019թ.-ից մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրը՝ 19.08.2019թ.-ը համակարգում իրականացվել է թվով 1176 հայտի փաթեթի ներբեռնում՝ թվով 352 ընթացակարգերի համար, մասնավորապես՝ 16.08.2019թ.-ին իրականացվել է թվով 50 հայտի բեռնում, իսկ գրությամբ նշված

ընթացակարգի համար ներբեռնվել է 2 հայտ՝ 06.08.2019թ.-ին ժամը 10:59-ին և 19.08.2019թ.-ին ժամը 10:23-ին, որոնք հասանելի են armeps.am կայքի «Հայտեր» բաժնում:

Նախարարությունը նաև տեղեկացրել է, որ ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՕՊՊԹ ծածկագրով ընթացակարգի շրջանակում «Ինֆորմատիկ Սոլուշն» ՍՊԸ-ի կողմից 07.08.2019թ.-ին ժամը 13:47-ին ցուցաբերվել է հետաքրքրվածություն, 08.08.2019թ.-ին ժամը 16:26-ին իրականացվել է հրավերի փաստաթղթերի բեռնում, իսկ 19.08.2019թ.-ին ժամը 10:23-ին՝ հայտի փաթեթի ներբեռնում, ինչի կապակցությամբ համակարգի կողմից ուղարկվել է ավտոմատ ծանուցում՝ ներբեռնված հայտի փաթեթի ստացականի համարով:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրակացության, որ ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՕՊՊԹ ծածկագրով ընթացակարգի շրջանակում «Ինտելիջենթ Սոլուշնս» ՍՊԸ-ի կողմից 07.08.2019թ.-ին ժամը 13:49-ին ցուցաբերվել է հետաքրքրվածություն, 07.08.2019թ.-ին ժամը 13:50-ին և 09.08.2019թ.-ին ժամը 10:06-ին իրականացվել է հրավերի փաստաթղթերի բեռնում:

Սակայն «Ինտելիջենթ Սոլուշնս» ՍՊԸ-ի կողմից հայտի փաթեթի ներբեռնում չի իրականացվել, դրա փոխարեն հայտի փաթեթի ներբեռնում իրականացվել է «Ինֆորմատիկ Սոլուշն» ՍՊԸ-ի անվամբ՝ 19.08.2019թ.-ին ժամը 10:23-ին, ինչի կապակցությամբ համակարգի կողմից ուղարկվել է ավտոմատ ծանուցում՝ ներբեռնված հայտի փաթեթի ստացականի համարով:

Վերը նշված՝ Ընկերության աշխատակիցների գործողությունները վկայում են այն հանգամանքի մասին, որ 15.08.2019թ.-ից մինչև 19.08.2019թ.-ի ժամը 12:00-ը ընկած ծամանակահատվածում armeps համակարգը աշխատել է անխափան, որի միջոցով գրությամբ նշված ընթացակարգի հայտարարության և հրավերի հրապարակման օրվանից՝ 02.08.2019թ.-ից մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրը՝ 19.08.2019թ.-ը համակարգում իրականացվել է թվով 1176 հայտի փաթեթի ներբեռնում՝ թվով 352 ընթացակարգերի համար, մասնավորապես՝ 16.08.2019թ.-ին իրականացվել է թվով 50 հայտի բեռնում, իսկ գրությամբ նշված ընթացակարգի համար ներբեռնվել է 2 հայտ՝ 06.08.2019թ.-ին ժամը 10:59-ին և 19.08.2019թ.-ին ժամը 10:23-ին, որոնք հասանելի են armeps.am կայքի «Հայտեր» բաժնում:

Ավելին՝ «Այյունեթվորքս» ՍՊԸ-ի ներկայացուցիչների հայտարարության համաձայն՝ armeps համակարգի միջոցով 15.08.2019թ.-ին և 19.08.2019թ.-ին ներկայացվել են բազմաթիվ հայտեր: Ներկայացուցիչները նշել են, որ եթե համակարգը ընդհանրապես չաշխատեր, ապա ընդհանրապես հնարավոր չէր լինի ներկայացնել հայտեր: Եթե համակարգի խափանում է լինում, ապա դա գրանցվում է Նախարարությունում, իսկ եթե

համակարգում գործիքը խափանված լինի, ապա բոլորի մոտ համակարգը չի աշխատի, այլ ոչ թե անհատական: Նշված դեպքում մասնակցի ոչ թե ֆայլն է վնասված, այլ ընդհանրապես այն բացակայել է, չի ներբեռնվել համակարգ:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ինտելիջենթ Սոլյուշնս» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգին մասնակցության որևէ հայտ չի ներկայացվել, որպիսի պայմաններում Բողոքներ քննող անձը փաստում է, որ Ընկերության կողմից բեռնված ֆայլերը մուտքագրման անհնարինությունը պայմանավորված չի եղել ցանցային և համակարգային խնդիրների պատճառով: Հատկապես այն դեպքում երբ նույն ժամանակահատվածում, մեկ այլ կազմակերպության պրոֆիլով՝ «Ինֆորմատիկ Սոլուշն» ՍՊԸ-ի կողմից Ընկերության աշխատակիցը 19.08.2019թ.-ին ժամը 10:23-ին՝ կատարվել է հայտի փաթեթի ներբեռնում: Վերը նշվածները թույլ են տալիս եզրահանգելու, որ «Ինտելիջենթ Սոլյուշնս» ՍՊԸ-ն ունեցել է բոլոր հնարավորությունները՝ Ընթացակարգին իր մասնակցության իրավունքը իրացնելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ինտելիջենթ Սոլյուշնս» ՍՊԸ-ի կողմից 27.08.2019թ.-ին թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/62 ծածկագրով ներկայացրած բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**